

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԲԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՆՆ ԸՆԴԴԵՍ ԹՈՒՐքԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

(Գանգատ թիվ 30685/05)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2010թ. մայիսի 10

ՎԵՐՋՆԱԿԱՆ

20/0804/2010

*Սույն վճիռն ընդունվել է 44-րդ հոդվածի 2-րդ կետի ներքո և
կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

ՓԱՍՏԵՐ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմողները ծնվել են համապատասխանաբար՝ 1973թ. և 1965թ.: Դիմումը ներկայացնելու պահին նրանք գտնվում էին Բայրամփաշա և Իդիրմե բանտերում:

A. Դիմողների կալանքը և նրանց նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքը հաստատող բժշկական եզրակացությունները

5. 1995թ. հուլիսի 21-ին Ստամբուլի Գազիոսմանփաշա թաղամասում ձեռքի նոնակ էր նետվել ոստիկանության ծառայողական ավտոմեքենայի մեջ: Մոտ տասնհինգ ոստիկաններ վիրավորվել էին: Այդ միջադեպի պատասխանատվությունն ստանձնել էր անօրինական զինված կազմակերպությունը՝ ԹՀԿ-ն (TDP) (Թուրքական հեղափոխական կուսակցություն): Հետևելով այդ դեպքին՝ ոստիկանությունն իրականացրել էր գործողություններ ԹՀԿ-ի անդամներին հայտնաբերելու ուղղությամբ:

1. Դիմողների կալանքը

6. 1995թ. օգոստոսի 4-ին և 5-ին՝ համապատասխանաբար, դիմողները ձերբակալվել և տեղափոխվել էին կալանավայր՝ ԹՀԿ-ում ներգրավվածության կասկածանքով: Նրանք մնացել էին կալանքի տակ մինչև 1995թ. օգոստոսի 17-ը:

7. 1995թ. օգոստոսի 11-ին և 13-ին՝ համապատասխանաբար, երկրորդ և առաջին դիմողները հարցաքննվել էին Ստամբուլի անվտանգության շտաբի հակաահաբեկչական բաժնի ոստիկանների կողմից, որի ընթացքում մանրամասն նկարագրել

էին ԹՀԿ-ում իրենց մասնակցությունը: 1995թ. օգոստոսի 14-ին երկրորդ դիմողը կրկին հարցաքննվել էր: Այդ օրը առաջին դիմողը մասնակցել էր ոստիկանական մեքենայի պայթեցման վերաարտադրողական միջոցառումներին: Տարբեր ամսաթվերի դիմողները մասնակցել էին լուսանկարների միջոցով անձի նույնականացման միջոցառումներին:

8. Դիմողներն իրենց դիմումներում դիմողները բողոքել են, որ իրենք ենթարկվել են խոշտանգումների կալանքի տակ գտնվելու ընթացքում: Այս կապակցությամբ նրանք պնդել են, որ իրենք պահվել են կեղտոտ ու չօդափոխվող խցում, զրկված քնելու հնարավորությունից, սննդից և ջրից, նրանց աչքերը կապված էր, նրանց վերաբերյալ հնչել են հայհոյանքներ և սպառնալիքներ, նրանք հարկադրաբար լսել են բարձր երաժշտություն, նրանց ծեծել են և մերկացրել են, պահել են բարձր ճնշման հոսանքով ջրում և ստիպել են կանգնել օդափոխիչի առջև: Առաջին դիմողն այնուհետև հայտարարել է, որ ենթարկվել է սեռական ոտնձգությունների և մերկացվել է, նրա մատները քաշել են և ստիպել կանգնել ոտքերի վրա:

2. Դիմողների բժշկական եզրակացությունը

ա) Գյուլդերեն Բարանը

9. 1995թ. օգոստոսի 17-ին դիմողը գննվել է բժշկի կողմից Պետական անվտանգության դատարանի դատաբժշկական ինստիտուտում, ով նշել է, որ ունեցել է քթից արյունահոսություն, ցավ՝ աճուկային շրջանում, աջ ձեռքի վրա երկու 1 սանտիմետրանոց վնասվածք և շրջանաձև ուռուցք դաստակի շուրջ, ինչպես նաև երկու ձեռքերի թուլություն և թմրածություն, աջ ձեռքի երկու մատների ցավ ու 2 x 1 սմ քերծվածք աջ ծնկի վրա: Բժիշկը նաև նշել էր արյունահոսությունը գինեկոլոգիական տրավմայի պատճառով, որը տեղի էր ունեցել մոտ տասնհինգ օր առաջ: Այնուամենայնիվ նա նշել էր, որ դիմողը հրաժարվել էր գինեկոլոգիական զննումից:

10. 1995թ. օգոստոսի 18-ին դիմողին զննել էր բանտային բժիշկը, ով նշել էր, *inter alia*, որ նրա ցավը տարածվել էր ողջ իրանով՝ երկու ձեռքերը շարժելու անկարողության և թմրածության հետ մեկտեղ: Բժիշկը նաև արձանագրել էր մի շարք տարբեր չափերի կապտուկներ և ուռած շրջաններ դիմողի մարմնի վրա, հատկապես՝ նրա թևատակերին, աջ ձեռքի և դաստակի, ձախ թևի,

ծնկների, ոտքերի վրա: Ի վերջո, նա նշել էր, որ դիմողի մոտ առկա էր ցավ՝ ձախ ձվարանների և միզապարկի շրջանում:

11. 1995թ. հոկտեմբերի 30-ին դիմողը գննվել էր Փորձաքննության երրորդ բաժանմունքի և դատաբժշկական ինստիտուտի բժիշկների կողմից: Բժիշկները նաև ստուգել էին դիմողի նախորդ բժշկական եզրակացություններն ու (EGM) գննության արդյունքները¹: Նրանք եզրակացրել էին, որ դիմողը տառապում է թևի երկկողմանի պլեքսիդից (նյարդերի վնասվածք):

12. Դիմողի գործում պարունակվող մի շարք եզրակացությունների, զեկույցների, բժշկական պատկերամուտի (սկանի) և վերլուծությունների համաձայն՝ նրա մոտ ախտորոշվել էր ուսի և ձախ թևի անբուժելի պլեքսիդ և ձախ ձեռքի բուժելի պլեքսիդ, որի բուժման համար պահանջվել էր ֆիզիկական թերապիա ավելի քան մեկ ու կես տարվա ընթացքում: Արդյունքում՝ նրա ձախ ձեռքը բուժվել էր: Սակայն նրա աջ թևն անդառնալիորեն վնասվել էր:

13. 1998թ. հոկտեմբերի 19-ին դիմողը գննվել էր Փորձաքննության երրորդ բաժանմունքի և դատաբժշկական ինստիտուտի բժիշկների կողմից: 1998թ. դեկտեմբերի 18-ին, Ստամբուլի ասսիզների դատարանի պահանջով Փորձաքննության երրորդ բաժանմունքը (Ihtisas Kurulu) ներկայացրել էր իր եզրակացությունը, ըստ որի՝ նրանք գտնում էին, որ դիմողի ձախ թևի վիճակը նորմալ էր, սակայն նրա ձախ ձեռքը պարալիզացված էր, ինչը համարվում էր մշտական հաշմանդամություն (uzuv zaafi):

Բ) Հաջի Ազիզ Հանը

14. 1995թ. օգոստոսի 17-ին դիմողը գննվել էր Պետական անվտանգության դատարանի դատաբժշկական ինստիտուտի բժշկի կողմից, ով նշել էր, որ նա ուներ ցավ՝ պարանոցի շրջանում և դժվարությամբ էր շարժում այն, ուներ ծակոցներ աջ և ձախ ձեռքերի շրջանում:

15. 1998թ. հուլիսի 2-ին դիմողը գննվել էր Ստամբուլի համալսարանի բժշկական ֆակուլտետի բժշկի կողմից, ով ախտորոշել էր միջոդնաշարային դիսկի խախտում: Դիմողն ընդունել էր դեղամիջոցներ: Այնուամենայնիվ, բժիշկը նշել էր, որ այդ վիճակում դիմողը պետք է վերահսկվի և բուժվի շարունակաբար:

1. EGM - Էլեկտրոգրամը թեսթ է, որն օգտագործվում է մկանների գործունեության էլեկտրական ձայնագրությամբ:

B. Դիմողների դեմ քրեական վարույթը

16. 1995թ. օգոստոսի 17-ին դիմողները բերման էին ենթարկվել դատախազի և Ստամբուլի պետական անվտանգության դատարանի դատավորի մոտ, որտեղ նրանք հրաժարվել էին որևէ հայտարարություն անել կալանքի ընթացքում խոշտանգումների ենթարկվելու մասին:

17. 1995թ. սեպտեմբերի 21-ին Ստամբուլի պետական անվտանգության դատարանում դատախազը պետության սահմանադրության համաձայն ներկայացրել էր մեղադրական եզրակացություն դիմողների և մյուս կասկածյալների դեմ՝ Քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածի ներքո պետության սահմանադրական կարգը խախտելու, մասնավորապես՝ ոստիկանության մեքենան պայթեցնելու համար:

18. Անհայտ ամսաթվի սկսվել էր քրեական վարույթը Ստամբուլի պետական անվտանգության դատարանում: Դիմողներին ներկայացրել էր նույն փաստաբանը՝ տկն Ջ. Թանչերը: 1995թ. դեկտեմբերի 19-ի նիստի ընթացքում դիմողների փաստաբանը պնդել էր, որ իր պաշտպանյալները ենթարկվել են խոշտանգումների, և խնդրել էր դատարանին քրեական հետախուզություն կատարել (suç duyurusu): Ստամբուլի պետական անվտանգության դատարանը մերժել էր պահանջը՝ նշելով, որ դիմողները կարող էին ներկայացնել իրենց բողոքները դատախազությանը, և որ նման կերպ վարվելու կարիք չկա:

19. Դատավարության ընթացքում դատարանը լսել էր մեղադրյալներին, մի քանի ոստիկանների, ովքեր վիրավորվել էին ոստիկանական մեքենան պայթեցնելու ժամանակ, և ոստիկանության աշխատակիցների, ովքեր մասնակցել էին տարբեր միջոցառումների դիմողների կալանքի ընթացքում: Նման ոստիկանի լսելու ընթացքում առաջին դիմողը և մյուս մեղադրյալը դատարանին խնդրել էին չլսել նրան՝ պնդելով, որ այդ մարդը խոշտանգել էր իրենց: Դատարանն այնուհետև

ուսումնասիրել էր ոստիկանական մեքենայի պայթեցման վերաբարտադրողական միջոցառումների տեսաձայնագրությունները: 1995թ. դեկտեմբերի 19-ին, 1997թ. մայիսի 22-ին և 1999թ. նոյեմբերի 9-ին երկրորդ դիմողը դատարան էր ներկայացրել գրավոր հայտարարություններ: Միայն առաջին հայտարարությունում նա պնդել էր, որ ոստիկանությանը տրված իր հայտարարությունն անվավեր է, քանի որ նա այն ստորագրել էր խոշտանգումների և ճնշման արդյունքում՝ առանց կարդալու հնարավորության: Հետագա իր հայտարարություններում դիմողն սկզբունքորեն պնդել էր, որ ինքը հեղափոխական է, սակայն, որևէ կապ չունի անօրինական կազմակերպության հետ: Մասնավորապես, նա պնդել էր, որ իր տանը հայտնաբերված զենքերը, ռումբերը պատկանում էին մեղադրյալներից մեկին, ով խնդրել էր իր պահապանն օգտագործել նրա անձնական իրերը պահելու նպատակով: Նա բերել էր իր իրերը տոպրակի մեջ և խնդրել էր պահել դրանք: Դիմողը պատկերացում չունեի զենքի առկայության մասին:

20. 1995թ. դեկտեմբերի 19-ին, 1998թ. սեպտեմբերի 1-ին և 2000թ. փետրվարի 4-ին առաջին դիմողը գրավոր հայտարարություն էր ներկայացրել դատարան: Ի տարբերություն երկրորդ դիմողի, նա քննադատել էր պետական անվտանգության դատական համակարգը, դիմողը մանրամասն նկարագրել էր վատ վերաբերմունքը, որին նա ենթարկվել էր կալանքի տակ գտնվելու ընթացքում, և հերքել էր որևէ անօրինական կազմակերպությունում իր ներգրավվածության հնարավորությունը: Նա պնդել էր, որ երկրորդ դիմողի տանը հայտնաբերված առարկաները պատկանում էին մեղադրյալներից մեկին, և որ նա չգիտեր, թե դրանք ինչ են: Նա նաև կատարել էր պարզաբանումներ իր անձը հաստատող կեղծ քարտի և ամուսնության վկայականի վերաբերյալ:

21. 1997թ. մայիսի 22-ին Ստամբուլի պետական անվտանգության դատարանը մեղավոր էր ճանաչել դիմողներին և դատապարտել՝ առաջին դիմողին Քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածի և երկրորդ դիմողին Քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի համաձայն:

22. 1998թ. մարտի 27-ին Վճռաբեկ դատարանը կարճել էր առաջին ատյանի դատարանի վճիռն այն հիմքով, որ վերջնական դատալսումը տեղի էր ունեցել առաջին դիմողի բացակայությամբ, չնայած այն հանգամանքին, որ նա ներկայացրել էր իր առողջական

վիճակը հաստատող բժշկական եզրակացություն: Դատական նիստում, հետևաբար, խախտվել է պաշտպանության իր իրավունքը: Հաշվի առնելով մեղադրյալների միջև փաստացի և իրավական հարաբերությունները՝ դատարանը վճռել էր, որ առաջին ատյանի դատարանի վճիռը պետք է կարճվի բոլոր ամբաստանյալների առնչությամբ:

23. Անհայտ ամսաթվի գործը վերադարձվել էր առաջին ատյանի դատարան, որից հետո վերջինս անցկացրել էր հերթական լսումները: Աբդուլա Օջալանին հայտնաբերելուց հետո դիմողները և որոշ մեղադրյալներ տեղեկացրել էին դատարանին, որ իրենք անժամկետ հացադուլ են հայտարարում ի նշան բողոքի: Ավելին, 1998թ. սեպտեմբերի 1-ից հետո կայացած մի շարք լսումներից հետո դիմողները հրաժարվել էին հանդես գալ դատարանում այն հիմքով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել էր, որ Պետական անվտանգության դատարաններն անկախ ու անկողմնակալ չեն: 1998թ. հոկտեմբերի 27-ին դիմողների ներկայացուցիչը տեղեկացրել էր դատարանին, որ ինքն այլևս չի ներկայանա լսումներին և խնդրել էր դատարանին դադարեցնել վարույթը՝ այն հիմքով, որ դատարանն անկախ և անաչառ չէ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման համաձայն:

24. Միևնույն ժամանակ, 2000թ. դեկտեմբերի 21-ին ընդունվել էր վաղաժամկետ ազատման մասին թիվ 4616 օրենքը: Այնուամենայնիվ, այդ օրենքը չէր տարածվում Քրեական օրենսգրքի 146 և 168-րդ հոդվածների ներքո մեղադրվող անձանց վրա: Այսպիսով, այն կիրառելի չէր դիմողների դեպքում: 2001թ. հունվարի 24-ին դիմողները դիմել էին Վճռաբեկ դատարան՝ Սահմանադրության համապատասխան դրույթներին այդ օրենքի համապատասխանության հարցը որոշելու համար գործը Սահմանադրական դատարան ուղարկելու պահանջով, սակայն՝ ապարդյուն:

25. 2000թ. մարտի 2-ին Ստամբուլի պետական անվտանգության դատարանն առաջին դիմողին մեղավոր էր ճանաչել պետության սահմանադրական կարգը խախտելու համար և դատապարտել էր ցմահ ազատազրկման Քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածի համաձայն: Իր որոշման մեջ դատարանը հաշվի էր առել գործով ապացույցները, որոնք ընդգրկում էին դիմողի տանը հայտնաբերած փաստաթղթերը, որոնք վերաբերում էին

անօրինական կազմակերպության ստեղծմանը, փորձագիտական զեկույցները, նույնականացման ընթացակարգերի վերաբերյալ գրանցումները, դեպքի վայրի լուսանկարները, վերարտադրողական միջոցառումների գրառումները, արձանագրությունները և տեսագրությունները: Դատարանը նշել էր, որ ներպետական դատարաններում տեղի է ունեցել վարույթ՝ կապված կալանքի ընթացքում վատ վերաբերմունքի վերաբերյալ դիմողների պնդումների հետ:

26. Նույն օրը դատարանը քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի հիմքով մեղավոր էր ճանաչել երկրորդ դիմողին անօրինական զինված կազմակերպությանն անդամակցելու համար և դատապարտել նրան տասներկու տարի և վեց ամիս ժամկետով ազատազրկման: Ընդ որում, այն հաշվի էր առել գործում առկա ապացույցները, այդ թվում՝ դիմողի՝ կալանքի տակ գտնվելու ընթացքում արված հայտարարությունները, վերարտադրողական միջոցառումների արձանագրությունները, այլ կասկածյալների հայտարարությունները, անօրինական կազմակերպության վերաբերյալ փաստաթղթերը և այլ ապացույցներ, ինչպիսիք էին նրա տանը հայտնաբերված զենքը և քիմիական պայթուցիկ նյութերը: Իր որոշման մեջ դատարանը նաև նշել էր, որ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելուց հետո մեղադրյալն անտեղի ձգձգել էր քրեական վարույթը՝ դատարան չներկայանալով, հացադուլով՝ պահանջելով դատարան չներկայանալն արդարացնող բժշկական եզրակացությունները:

27. Դիմողները բողոքարկել էին այդ որոշումը: Նրանք մասնավորապես նշել էին, որ առաջին ատյանի դատարանը չի անցկացրել լրացուցիչ քննություն, որ այն հրաժարվել էր լսել կարևոր վկաներին կամ վերարտադրողական միջոցառումներն անցկացնել այնպես, որ շտկվեն փաստացի հակասությունները: Այն քննադատել էր ներպետական դատարանների կողմից ապացույցները մեկնաբանելու եղանակները: Բացի դրանից, դիմողները բողոքել էին, որ ինքնին առաջին ատյանի դատարանը հիմնվել էր ապօրինի եղանակով ձեռք բերված ապացույցների վրա: Այս կապակցությամբ, նրանք պնդել էին, որ ներպետական դատարանը հիմնվել էր ոստիկանների հայտարարությունների վրա, չնայած խոշտանգումների վերաբերյալ բժշկական եզրակացություններին: Նրանք նաև պնդել էին, որ նախաքննության ընթացքում ոստիկանության կողմից

ապահովված մյուս փաստաթղթերը նույնպես ձեռք էին բերվել ապօրինի կերպով: Ի վերջո, դիմողները պնդել էին, որ դատարանը հանցագործությունը որակելու հարցում թույլ էր տվել սխալներ:

28. 2001թ. հունվարի 29-ին Վճռաբեկ դատարանը լսումներ էր անցկացրել և Ստամբուլի պետական անվտանգության դատարանի վճիռը թողել անփոփոխ:

C. Տիկին Բարանի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի քննությունը և դրանից բխող քրեական վարույթը մեղադրյալ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ

29. Անդրադառնալով առաջին դիմողի բողոքին, որը ներկայացվել էր նրա օրինական ներկայացուցիչ տկն Թանչերի կողմից, քննությունն սկսվել էր Ֆաթիհի հանրային դատախազի կողմից:

30. 1996թ. հունվարի 29-ի և 1996թ. մարտի 6-ի միջև ընկած ժամանակահատվածում Ֆաթիհի դատախազը լսել էր այն հինգ ոստիկանների վկայությունները, որոնք մասնակցել էին դիմողների ձերբակալմանը և հարցաքննությանը: Նրանք բոլորը հերքել էին դիմողների՝ վատ վերաբերմունքի մասին պնդումները:

31. 1996թ. մարտի 28-ին Ֆաթիհի դատախազը լսել էր դիմողի վկայությունը: Նա մանրամասն նկարագրել էր վատ վերաբերմունքը, որը ներառում էր ծեծ, թաց վիճակում ցուրտ տեղերում պահելը և պարբերաբար սեռական ոտնձգությունների ենթարկվելը: Դիմողը նաև հակիրճ նկարագրել էր ենթադրյալ հանցագործներին:

32. 1996թ. հունիսի 18-ին Ֆաթիհի դատախազը Ստամբուլի դատախազին էր ուղարկել իր եզրակացությունը վատ վերաբերմունք կիրառելու համար Ստամբուլի անվտանգության գրասենյակի հակաահաբեկչական մասնաճյուղի հինգ ոստիկաններին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

33. 1996թ. հունիսի 26-ին Ստամբուլի դատախազը ներկայացրել էր մեղադրական եզրակացություն ոստիկանության հինգ աշխատակիցների դեմ՝ տկն Բարանին վատ վերաբերմունքի ենթարկելու համար: Մեղադրանքները ներկայացվել էին Քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածի համաձայն:

34. 1996թ. հոկտեմբերի 15-ին Ստամբուլի դատարանում սկսվել էր դատական նիստ մեղադրյալ ոստիկանների դեմ:

35. 1997թ. մայիսի 8-ին և 11-ին տեղի ունեցած լսումների ընթացքում դատարանը լսել էր դիմողի վկայությունը, ով մանրամասներ էր հաղորդել վատ վերաբերմունքի կապակցությամբ և ճանաչել էր մեղադրյալ ոստիկաններին, որոնք պատասխանատու էին վատ վերաբերմունք կիրառելու համար, բացառությամբ մեկի, որի ինքնության հաստատման հարցում նա վստահ չէր: Վերջին օրը դատարանը լսել էր նաև մեկ այլ կալանավորի և դիմողի վկա պրն Ք.Յ.-ի վկայությունը:

36. 1998թ. մայիսի 6-ին դատարանը լսել էր մեկ այլ կալանավորի և դիմողի վկա տկն Ա.Ե.-ի վկայությունը:

37. 2002թ. մարտի 12-ին Ստամբուլի ասսիզների դատարանը կարճել էր ոստիկանության աշխատակիցների դեմ հարուցած քրեական վարույթը՝ այն հիմքով, որ տեղի ունեցած իրադարձություններից հինգ տարի էր անցել, այսինքն դրանց վաղեմության ժամկետն անցել էր: 2004թ. փետրվարի 19-ին Վճռաբեկ դատարանը այդ որոշումը թողել էր անփոփոխ:

D. Հետագա զարգացումները

38. 2003թ. հունիսի 17-ին Հանրապետության Նախագահին անդրադառնալով Դատաբժշկական ինստիտուտի 2003թ. ապրիլի 21-ի եզրակացությանը՝ թույլատրել էր, որ տկն Բարանը քրոնիկ հիվանդության հիմքերով իր մնացած պատիժը չկրի՝ համաձայն Սահմանադրության 104-րդ հոդվածի b կետի: Դիմողը ազատ էր արձակվել բանտից 2003թ. հուլիսի 24-ին:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

39. Այդ ժամանակահատվածում գործող համապատասխան ներպետական օրենսդրությանը և պրակտիկային, ինչպես նաև վերջին զարգացումներին կարելի է հանդիպել հետևյալ վճիռներում՝ Քոլուն ընդդեմ Թուրքիայի (թիվ 35811/97, կետ 44, 2005թ. օգոստոսի 2), Սալդուզն ընդդեմ Թուրքիայի ([GC], թիվ 36391/02, կետեր 27-31, 2008թ. նոյեմբերի 27), Բաթին և այլոք ընդդեմ Թուրքիայի (թիվ 33097/96 և 57834/00, ECHR 2004թ.-IV) և Զինիփ Օզչան ընդդեմ Թուրքիայի (թիվ 45906/99, 2007թ. փետրվարի 20):

ՕՐԵՆՔ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ԵՎ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

40. Դիմողները բողոքել էին Կոնվենցիայի 3-րդ և 13-րդ հոդվածների ներքո, որ իրենք ենթարկվել էին վատ վերաբերմունքի կալանքի տակ գտնվելու ընթացքում, և որ ներպետական իշխանությունները չեն անցկացրել արդյունավետ քննություն:

41. Դատարանը գտնում է, որ այդ գանգատները պետք է քննության առնվեն միայն 3-րդ հոդվածի տեսանկյունից, որը սահմանում է՝

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

A. Ընդունելիությունը

1. *Գյուլդերեն Բարան*

42. Կառավարությունը Դատարանին խնդրել է մերժել դիմողի գանգատները, որպես անընդունելի, քանի որ նա չի սպառել ներպետական միջոցները՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Այն պնդել է, որ դիմողը կարող էր փոխհատուցում պահանջել Քաղաքացիական և Վարչական դատարաններում՝ պատճառված վնասի համար, որը, ըստ նրա պնդումների, նա կրել էր: Բացի դրանից, Կառավարությունը պնդել է, որ նա պետք է դիմումը ներկայացներ միջադեպի օրվանից վեց ամսվա ընթացքում:

43. Դատարանը կրկնում է, որ նախորդ գործերում քննվել և մերժվել էր Կառավարության նույն՝ ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ փաստարկը (տես, օրինակ՝ Նեվրաս Կոչն ընդդեմ Թուրքիայի, թիվ 18207/03, կետ 31, 2007թ. հունիսի 12): Դատարանը չի գտնում որևէ կոնկրետ հանգամանք սույն դիմումում, ինչը կստիպեր փոխել այդ եզրակացությունը:

44. Ավելին, Դատարանը գտնում է, որ դիմողի գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այնուհետև այն նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

2. *Հաչի Ազիզ Հան*

45. Դատարանը կրկնում է, որ եթե միջոցները մատչելի չեն կամ եթե դրանք գնահատվում են անարդյունավետորեն՝ վեցամսյա ժամկետն սկզբունքորեն հաշվարկվում է բողոքը ներկայացնելու

օրվանից (տե՞ս Հազարը և այլոք ընդդեմ Թուրքիայի (dec.), թիվ 62566/00, 2002թ. հունվարի 10): Այնուամենայնիվ, հատուկ նկատառումները կարող են կիրառվել բացառիկ դեպքերում, երբ դիմողն ապավինում է առկա պաշտպանությանը և միայն հետագայում են հայտնի դառնում այնպիսի հանգամանքներ, որոնք միջոցը դարձնում են անարդյունավետ. նման դեպքերում նպատակահարմար է որպես սկիզբ ընդունել այն օրվանից սկսած վեցամսյա ժամկետը, երբ նա առաջին անգամ տեղեկացել է կամ պարտավոր էր տեղյակ լինել այդ հանգամանքների մասին (տես Փոլը և Էնդրյու Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության (dec.), թիվ 46477/99, 2001թ. հունիսի 7):

46. Դատարանը նշում է, որ 1995թ. դեկտեմբերի 19-ին կայացած լսումների ժամանակ դիմողը Ստամբուլի պետական անվտանգության դատարանում հայտնել էր իր նկատմամբ կիրառված դաժան վերաբերմունքի մասին և խնդրել իշխանություններին քրեական քննություն նախաձեռնել (suç duyurusu): Ստամբուլի պետական անվտանգության դատարանը մերժել էր այս խնդրանքը՝ նշելով, որ մեղադրյալը կարող է անձամբ ներկայացնել իր բողոքները դատախազություն, և որ կարիք չկա, որպեսզի դրանով զբաղվի դատարանը (տե՛ս վերը կետ 18): Բացի դրանից, 2000թ. մարտի 2-ի իր որոշմամբ Ստամբուլի պետական անվտանգության դատարանը որևէ վկայակոչում չի կատարել դիմողի վատ վերաբերմունքի պնդումների վերաբերյալ: Այն նաև նշել էր, որ իր դիմումում դիմողը միայն բողոքել էր, որ ներպետական դատարանն օգտագործել էր ոստիկանության կողմից խոշտանգումների արդյունքում ձեռք բերված վկայությունը և չի նշել խոշտանգումների վերաբերյալ որևէ մանրամասն տեղեկություն՝ իշխանությունների կողմից քրեական վարույթ նախաձեռնելու համար: Սույն գործի կոնկրետ հանգամանքների առնչությամբ, Դատարանը գտնում է, որ դատական մարմինների կողմից որևէ գործողություն չիրականացնելը պետք է աստիճանաբար ակնհայտ դառնար դիմողի համար 2000թ. մարտի 2-ին, երբ Ստամբուլի պետական անվտանգության դատարանը որոշում էր կայացրել այս հարցի վերաբերյալ: Հետևաբար, դիմողը պետք է այդ օրվանից տեղյակ լիներ ներպետական օրենսդրության միջոցների անարդյունավետության մասին: Ըստ այդմ, վեցամսյա ժամկետը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պետք է հաշվարկվի ոչ ուշ, քան 2000թ. մարտի 2-ը (տե՛ս Կանատն

ընդդեմ Թուրքիայի (dec), թիվ 16622/02, 2007թ. նոյեմբերի 8): Սակայն դիմումը ներկայացվել է Դատարան 2001թ. հունիսի 19-ին, ուստի դրանից հետևում է, որ դիմումի այս մասը ներկայացվել է ժամկետանց, և, հետևաբար, պետք է մերժվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերի համաձայն:

B. Առաջին դիմողի գանգատի բովանդակությունը

47. Կառավարությունը հիմնականում մեջբերում է կատարել վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների առնչությամբ Դատարանի նախադեպային իրավունքից, և պնդել, որ սույն գործով անցկացվել է մանրամասն քննություն:

48. Առաջին դիմողը հաստատել է իր պնդումները:

49. Դատարանը կրկնում է, որ եթե անձը կալանավորվում է առողջ վիճակում, սակայն ազատ արձակվելու պահին ունի վնասվածքներ, ապա պետությունը պետք է ապահովի ճշմարտացի բացատրություն, թե ինչպես են այդ վնասվածքները պատճառվել, և ներկայացնի ապացույցներ, որոնց միջոցով կասկածի տակ կառնվեն դիմողի պնդումները, եթե հատկապես այդ պնդումները հիմնավորված են բժշկական եզրակացությամբ, այլապես առաջանում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (տես՝ Յանաներն ընդդեմ Թուրքիայի, թիվ 6291/05, կետ 34, 2009թ. հուլիսի 16, դրանում առկա հղումները):

50. Ապացույցները գնահատելիս Դատարանը, ընդհանուր առմամբ, կիրառում է «նոյն ժամանակահատվածի վեր» ապացուցման չափորոշիչը (տես՝ Ավշարն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25657/94, կետ 282, ՄԻԵԴ 2001թ.): Նման ապացույցները կարող են առաջանալ բավականաչափ ծանրակշիռ պարզ և համահունչ եզրակացություններից կամ նմանատիպ անհերքելի փաստերի գոյակցությունից (տես՝ Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, կետ 161, 1978թ. հունվարի 18, Series A թիվ 25): Այն դեպքում, երբ իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծամասամբ գտնվում են իշխանությունների հսկողության ներքո, ինչպես իրենց վերահսկողության տակ գտնվող կալանավորված անձանց դեպքում, ապա ստեղծվում է կալանքի ընթացքում վնասվածք ստանալու հնարավորություն: Անշուշտ, ապացուցման բեռը կարող է դրվել իշխանությունների վրա՝ բավարար ու համոզիչ բացատրություն ապահովելու համար (տես՝ Սալմանն ընդդեմ Թուրքիայի [GC], թիվ 21986/93, կետ 100, ECHR 2000թ.-VII):

51. Դատարանը նշում է, որ սույն գործում, դիմողը կալանքի տակ էր գտնվել առնվազն տասներեք օր: Այն նշում է, որ դիմողի կողմից ներկայացված վատ վերաբերմունքը հիմնականում եղել է ծեծի ենթարկվելը, մերկացվելը, բարձր հոսանքով ջրում պահելը և օդափոխիչի առջև կանգնելը, ինչպես նաև սեռական ոտնգձությունների ենթարկվելը, մազերը և մատները քաշելը և ոտքերի վրա կանգնեցնելը: Այս կապակցությամբ, այն գտնում է, որ դիմողի՝ իրադարձությունների վերաբերյալ վարկածը, բացառությամբ մի քանի մանրամասների, եղել էր հետևողական և՛ Դատարանի, և՛ ներպետական իշխանությունների առջև:

52. Ինչ վերաբերում է բժշկական ապացույցներին՝ Դատարանը նշում է, որ դիմողը չի ենթարկվել բժշկական զննության ձերբակալվելուց հետո: Այնուհետև այն նշում է, որ բժշկական եզրակացությունը, որը կազմվել էր նրա կալանքի տակ գտնվելու ավարտին և անմիջապես նրա ձերբակալությունից հետո, ներկայացնում էր մի շարք վնասվածքներ, մասնավորապես՝ դիմողի ձեռքերի շրջանում (տե՛ս վերը կետեր 9 և 10): Հետագա բժշկական հետազոտությունները հաստատում են, որ դիմողն ունեցել է թևի երկկողմ պլեքսիդ (նյարդերի վնասվածք), և Դատարանը նշում է, որ նրա աջ ձեռքի վնասվածքն անբուժելի էր (տե՛ս՝ վերը՝ կետեր 11, 12 և 13): Այդ ապացույցները, Դատարանի կարծիքով, համընկնում են դիմողի պնդումների հետ և հաստատում դրանք:

53. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի ներկայացրել բացատրություն առ այն, թե ինչ կերպ են այդ վնասվածքները պատճառվել դիմողին: Հաշվի առնելով գործի հանգամանքները և Կառավարության ճշմարտանման բացատրության բացակայությունը՝ Դատարանը գտնում է, որ դրանք այնպիսի վերաբերմունքի արդյունք են, որի համար Կառավարությունը կրում է պատասխանատվություն:

54. Ինչ վերաբերում է վերաբերմունքի լրջությանը՝ Դատարանը կրկնում է, որ այս ոլորտում ըստ իր նախադեպային իրավունքի (տե՛ս՝, Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի [GC], թիվ 5803/94, կետեր 96-97, ECHR 1999թ.-V)՝ կոնկրետ վատ վերաբերմունքը որպես խոշտանգում որակելու հարցը լուծելու համար այն պետք է հաշվի առնի 3-րդ հոդվածում ամրագրված անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և սույն հասկացության տարբերակումը: Ըստ երևույթին, Կոնվենցիայի այս

տարբերակման միջոցով է որոշվում անմարդկային վերաբերմունքը, որը պատճառում է լուրջ և դաժան տառապանք:

55. Հաշվի առնելով վատ վերաբերմունքի բնույթն ու աստիճանը և այն եզրահանգումը, որ այն պատճառվել էր դիմողից անօրինական զինված կազմակերպության հետ իր կապի վերաբերյալ տեղեկատվություն կորզելու միտումով, Դատարանը գտնում է, որ վատ վերաբերմունքը պատճառել էր լուրջ ու դաժան տառապանք, որը կարող է բնութագրվել որպես խոշտանգում (տես՝ Քոչակն ընդդեմ Թուրքիայի, թիվ 32581/96, կետ 48, 2007թ. մայիսի 3, և դրանում նշված գործերը):

56. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

57. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը նաև պահանջում է, որ իշխանությունները քննեն վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները, երբ դրանք «վիճելի» են և «առաջացնում են հիմնավոր կասկածներ» (տես՝ մասնավորապես՝ Էյն ընդդեմ Թուրքիայի, թիվ 30951/96, կետեր 59-60, 2005թ. մարտի 22): Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված արդյունավետության նվազագույն չափորոշիչները ներառում են այն պահանջները, որ քննությունը լինի անկախ, անաչառ և հրապարակային, և որ իրավասու մարմինները գործեն օրինակելի աշխատասիրությամբ և արագությամբ (տես՝ օրինակ՝ Ջելիքը և Իմրիթն ընդդեմ Թուրքիայի, թիվ 44093/98, կետ 55, 2004թ. հոկտեմբերի 26): Ավելին, եթե պաշտոնական քննությունը հանգեցրել է ներպետական դատարաններում վարույթ սկսելուն՝ ապա վարույթն ամբողջությամբ, ներառյալ դատավարական փուլը, պետք է բավարարի վատ վերաբերմունքի արգելքի պահանջները: Մինչդեռ առկա չէ բացարձակ պարտավորություն առ այն, որ բոլոր հետապնդումները պետք է հանգեցնեն դատապարտման, այնուամենայնիվ, ներպետական դատարանները որևէ պարագայում չպետք է թույլատրեն ֆիզիկական և բարոյական ամբողջականության նկատմամբ դաժան հարձակումները և անպատիժ մնալը (տես՝ Օկալին ընդդեմ Թուրքիայի, թիվ 52067/99, կետ 65, ECHR 2006թ.-XII (քաղվածքներ)):

58. Այս կապակցությամբ Դատարանը մեկ անգամ ևս հաստատում է, որ երբ պետության գործակալը մեղադրվում է հանցագործության մեջ, որը խախտում 3-րդ հոդվածը, ապա քրեական վարույթն ու դատապարտումը չպետք է գերազանցեն վաղեմության ժամկետը, և

համաներում կամ ներում շնորհելը չպետք է լինի թույլատրելի (տես՝ Էրդողան Յիլմազը և այլոք ընդդեմ Թուրքիայի, թիվ 19374/03, կետ 56, 2008թ. հոկտեմբերի 14): Այն նաև հիշեցնում է, որ եթե պետության գործակալը մեղադրվում է այնպիսի հանցագործությունների մեջ, որոնք ներառում են խոշտանգումներ կամ անմարդկային վերաբերմունք, չափազանց կարևոր է, որ նրա աշխատանքային լիազորությունները կասեցվեն քննության և դատավարության ընթացքում և դատապարտվելու դեպքում դրանք պետք է արգելվեն (տես՝ Աբդուլսամեթ Յամանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 32446/96, կետ 55, 2004թ. նոյեմբերի 2):

59. Դատարանը գտնում է, որ Պատասխանող պետությունը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն պատասխանատու է դիմողին պատճառված վնասվածքների համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր կատարել արդյունավետ քննություն:

60. Սույն գործում Դատարանը նշում է, որ ոստիկանների դեմ վարույթը կարճվել էր 2002թ. մարտի 12-ին, քանի որ կանոնադրական ժամանակային սահմանափակումը լրացել էր: Սույն վճիռը վերջնական էր դարձել 2004թ. փետրվարի 19-ին: Ավելին, գործում չկա որևէ նշում, որը ցույց կտար, որ մեղադրյալ ոստիկանների աշխատանքային լիազորությունները կասեցվել էին: Այս համատեքստում Դատարանը կրկնում է իր մի շարք գործերում ավելի վաղ հայտնած կարծիքն առ այն, որ թուրքական քրեական համակարգը, որը կիրառվում է, չի կարող ապահովել պետության գործակալների կողմից կատարվող անօրինական գործողությունների արդյունավետ կանխարգելում, եթե նրանց դեմ հարուցված քրեական գործն ունի վաղեմության ժամկետ (տես՝ Յեշիլն ու Սիվիլմն ընդդեմ Թուրքիայի, թիվ 34738/04, կետ 42, 2007թ. հունիսի 5, և Հուսեյն Իսինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 49048 / 99, կետ 63, 2006թ. օգոստոսի 8): Այն որևէ պատճառ չի տեսնում սույն գործում այլ եզրակացության հանգելու համար:

Վերոնշյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ ոստիկանության աշխատակիցների դեմ հարուցված քրեական վարույթն անհամապատասխան է, և, հետևաբար, հակասում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված՝ պետության դատավարական պարտավորություններին:

62. Դրանից հետևում է, որ տեղի է ունեցել 3-րդ հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

63. Դիմողները պնդել են, որ իրենք դատապարտվել են խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ արած հայտարարությունների համար՝ կալանքի տակ գտնվելու ընթացքում, առանց փաստաբանի աջակցության: Նրանք նաև բողոքել են, որ իրենք՝ զրկվել են անկախ ու անաչառ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքից՝ հաշվի առնելով ռազմական դատավորի ներկայությունը Ստամբուլի պետական անվտանգության դատարանում, և այն, որ իրենք չէին տեղեկացվել Վճռաբեկ դատարանում դատախազի գրավոր կարծիքի մասին: Նրանք հղում են կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերին, որոնցում շարադրված է հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի... անկախ ու անաչառ դատարանի կողմից... դատաքննության իրավունք:

3. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, ունի հետևյալ նվազագույն իրավունքները ...

(c) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանի միջոցով ... »:

A. Ստամբուլի պետական անվտանգության դատարանի կողմից փաստաբանի բացակայության դեպքում խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացված հայտարարությունների օգտագործումը

1. Ընդունելիությունը

64. Դատարանը գտնում է, որ դիմումի այս մասն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Այնուհետև այն նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

2. Գործի հանգամանքները

65. Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ իր պարտավորությունը կայանում է Բարձր պայմանավորվող կողմերի՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների պահպանումն ապահովելու մեջ: Մասնավորապես, իր գործառույթը չէ զբաղվել ներպետական դատարանների կողմից թույլ տրված փաստերի կամ օրենքի խախտումներով, մինչև որ դրանք կարող են խախտել Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները: Մինչդեռ 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունք, այն չի սահմանում ապացույցների ընդունելիության

որևէ կանոն՝ որպես այդպիսին, ինչը հիմնականում կարգավորվում է ներպետական օրենսդրությամբ (տես՝ Շինքն ընդդեմ Շվեյցարիայի, 1988թ. հուլիսի 12, կետեր 45 -46, Series A թիվ 140):

66. Ուստի Դատարանը, չպետք է որոշի, թե արդյոք ապացույցների կոնկրետ տեսակները, օրինակ՝ ներպետական օրենսդրության տեսանկյունից ապօրինի կերպով ձեռք բերված ապացույցները, կարող են լինել ընդունելի, կամ թե՝ արդյոք դիմողը մեղավոր է, թե՝ ոչ: Հարցը, որի պատասխանն անհրաժեշտ է տալ, այն է, թե արդյոք արդար է վարույթն ամբողջապես, ներառյալ վկայությունները ձեռք բերելու եղանակը: Սա ներառում է Ֆանօրինական» քննությունը (տես՝ Յալոհն ընդդեմ Գերմանիայի [GC], թիվ 54810/00, կետ 95 , 2006թ. հուլիսի 11)

67. Դատարանը կրկնում է, որ խախտելով 3-րդ հոդվածը՝ ձեռք բերված ապացույցների օգտագործումը կարող է խախտել նման գործի արդար քննությունը, եթե նույնիսկ նման ապացույցները որոշիչ չեն այդ գործում (ibid., կետ 99, և Սուլեմեզն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46661/99, կետ 23, 2006թ. սեպտեմբերի 21): Այն նաև գտնում է, որ 3-րդ հոդվածի ներքո բողոքի բացակայությունը չի կաշկանդում Դատարանին դիմողի՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները հաշվի առնելով որոշել նաև 6-րդ հոդվածի երաշխիքների համապատասխանությունը (տե՛ս Յուրսը և այլոք ընդդեմ Թուրքիայի, թիվ 46213/99, կետ 60, 2006թ. հունիսի 20, և վերը նշված Քոլուի գործը, կետ 54):

68. Բացի դրանից, Դատարանը կրկնում է, որ իր դեմ վկայություն չտալու արտոնությունը կամ լռություն պահպանելու իրավունքը, ընդհանուր առմամբ, ճանաչված են որպես միջազգային չափանիշներ, որոնք ընկած են արդար դատաքննության հիմքում: Դրանց նպատակն է ապահովել իշխանությունների հարկադրանքից մեղադրյալի անձի պատշաճ պաշտպանությունը, և դրանով իսկ խուսափել դատական սխալներից և ապահովել 6-րդ հոդվածի նպատակները (տե՛ս Ջոն Մաբեյն ընդդեմ Միացյալ Թագավորության, 1996թ. փետրվարի 8, կետ 45, Վճիռների և որոշումների ժողովածու 1996թ.-I): Այս իրավունքը ենթադրում է, որ դատախազները պետք է փորձեն ապացուցել մեղադրյալի մեղքը՝ առանց այն ապացույցներին դիմելու, որոնք ստացվել են պարտադրանքի կամ նրան ճնշելու միջոցով (տես վերը նշված՝ Ջալոհի գործը, կետ 100, և Քոլուի գործը, կետ 51): Սկզբնական փուլում փաստաբանի մատչելիությունն ընթացակարգային

երաշխիքների մի մասն է, որին Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում (տես վերը՝ Սալդուզի գործը, կետ 54):

69. Ինչ վերաբերում է առաջին դիմողին, Դատարանը նշում է, որ այն պնդել է, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում ինքը ենթարկվել է խոշտանգումների՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո (տես վերը՝ կետ 56): Բացի դրանից, կողմերի միջև չի վիճարկվել, որ դիմողը այդ ընթացքում չի ստացել որևէ իրավական օգնություն, և որ նա վկայություն էր տվել ոստիկանությանը փաստաբանի բացակայության դեպքում վերարտադրողական միջոցառումների և անձի նույնականացման միջոցառումների ընթացքում: Դրանք այն տարրերն են, որոնց վրա հետազայում հիմնվել էր Ստամբուլի պետական անվտանգության դատարանը նրան դատապարտելիս: Այս կապակցությամբ Դատարանը կրկնում է, որ ապացույցները՝ լինեն խոստովանություն, թե՛ իրեղեն ապացույցներ, որոնք ստացվել են բռնության, դաժանության կամ վատ վերաբերմունքի միջոցով, ինչը բնութագրվում է որպես խոշտանգում, երբեք չպետք է հանդիսանան որպես տուժողի մեղքն ապացուցող հիմք, անկախ դրա ապացուցողական կշռից: Ցանկացած այլ հետևություն կարող է անուղղակիորեն օրինականացնել բարոյապես դատապարտելի վարքագիծը, որը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հեղինակները փորձել են արգելել, կամ, այլ կերպ ասած՝ «դաժանություն՝ օրենքի սահմաններում» (տես՝ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 36549/03, կետ 63, ECHR 2007թ.-VIII):

70. Ինչ վերաբերում է երկրորդ դիմողին, Դատարանը նշում է, որ նա ձերբակալվել էր ոստիկանության կողմից տասներկու օր՝ առանց հաղորդակցվելու իրավունքի, որի ընթացքում նա անգամ չի հաղորդակցվել իր ընտանիքի անդամների, փաստաբանի կամ բժշկի հետ: Բժշկական եզրակացությունը, որը կազմվել էր նրա կալանքի ավարտից հետո, պարունակում էր որոշակի եզրակացություններ, որոնք, Դատարանի կարծիքով, լուրջ կասկածներ են հարուցում նրան հարցաքննելու ընթացքում ոստիկանների վերաբերմունքի առումով: Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ չնայած դիմողը հերքել է իր հայտարարությունների բովանդակության ճշմարտացիությունը, որոնք արվել էին փաստաբանի բացակայության պարագայում և մատնանշել է գործի նյութերում առկա բժշկական եզրակացությունն առ այն, որ կալանքի ընթացքում նրա

նկատմամբ կիրառվել էր վատ վերաբերմունք, Ստամբուլի ասսիզների դատարանը նրան դատապարտելիս հիմնվել էր հենց այդ հայտարարությունների վրա, չնայած այն հանգամանքին, որ թուրքական օրենսդրությունը սովորաբար չի հիմնվում ցանկացած հարցաքննության ընթացքում ստացված խոստովանությունների վրա, որոնք հետագայում հերքվել էին դատարանում, ինչը պաշտպանության համար վճռորոշ է (տես վերը՝ կետ 39):

71. Ավելին, Դատարանը նշում է, որ դիմողի փաստաբանի մատչելիության իրավունքի սահմանափակումն այդ փուլում համակարգային էր և կիրառվում էր պետական անվտանգության դատարանների իրավասության մեջ մտնող ցանկացած հանցագործության կապակցությամբ (տես վերը՝ Սալդուզի գործը, կետ 56): Սալդուզի վճռում Դատարանը գտել էր, որ այն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին:

72. Այս հանգամանքներում, Դատարանը գտնում է, որ նախնական քննության ընթացքում, փաստաբանի բացակայության պարագայում խոշտանգումների արդյունքում ձեռք բերված վկայությունն ինչպես առաջին դիմողի դեպքում էր, և վատ վերաբերմունքի արդյունքում ձեռք բերված վկայությունը ինչպես երկրորդ դիմողի դեպքում դատավարությունը դարձնում է ամբողջությամբ անարդար:

73. Դրանից հետևում է, որ սույն գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(c) կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համատեղ:

B. Արդար դատավարության այլ ենթադրյալ խախտումներ

74. Կառավարությունը խնդրել է Դատարանին մերժել դիմողների գանգատները՝ Պետական անվտանգության դատարանի կողմից անկախությունը և անաչառությունը չպահպանելու վերաբերյալ և իրենց գանգատները վեցամսյա ժամկետում չներկայացնելու պատճառով (Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի խախտում): Այս կապակցությամբ այն պնդել է, որ դիմողներն իրենց դիմումը չեն ներկայացրել այն օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, երբ Սահմանադրության 143-րդ հոդված փոփոխությունների էր ենթարկվել ռազմական դատավորների ներկայությունը պետական անվտանգության դատարանում բացառելու կապակցությամբ:

75. Դատարանը գտնում է, որ Կառավարության առարկությունը պետք է սերտորեն կապված լինի դիմողների գանգատների բովանդակության հետ, որ այն չտարանջատվի դրանցից: Հետևաբար, վերոհիշյալ գանգատը քննելուց առաջ այս հարցերը պետք է քննվեն միասին: Քանի որ դիմողի գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով, հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

76. Այնուամենայնիվ, հաշվի առնելով գործի փաստերը, կողմերի պնդումները և հայտնաբերված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c)-րդ կետերի վերը նշված (կետ 73) խախտումները՝ Դատարանը գտնում է, որ այն արդեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով ուսումնասիրել է հիմնական իրավական հարցը: Հետևաբար, այն եզրակացնում է, որ անհրաժեշտ չէ այս դրույթի ներքո առանձին լուծել դիմողի գանգատի մնացած մասի հարցը (տես, օրինակ՝ Յանքին ընդդեմ Թուրքիայի, թիվ 52515/99, կետ 94, 2008թ. մայիսի 13, և Ջիթիրեն ընդդեմ Թուրքիայի, թիվ 10301/03, կետ 132, 2008թ. հուլիսի 22, և դրանում առկա գործերը):

III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

77. Դիմողների կողմից ներկայացված դիմումում առկա են մի շարք բողոքներ Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ և 14-րդ հոդվածների ներքո: Մասնավորապես, նրանք բողոքել են, որ իրենց ձերբակալումն և կալանավորումը տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի երկրորդից մինչև չորրորդ կետերում առկա երաշխիքներին լիովին անհամապատասխան: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո նրանք հետազայում վիճարկել են առաջին ատյանի դատարանի անկախությունը և անաչառությունն այն հիմքերով, թե որ սահմանված կարգով էին առաջադրվել քաղաքացիական դատավորները: Նրանք հայտնել են, որ պետական անվտանգության դատարանը կողմնակալ էր, կեղծ փաստեր էր ներկայացնում և մերժել էր իրենց խնդրանքները լրացուցիչ քննություն և վկաների առերեսում անցկացնելու վերաբերյալ: Այդ կապակցությամբ դիմողները բողոքել են, որ իրենց կալանավորելուց հետո իրենք լրագրողներին ներկայացվել էին, որպես հանցագործներ: Նրանք նաև բողոքել են քրեական վարույթի երկարաձգման դեմ, ինչպես նաև՝ որ Վճռաբեկ դատարանի որոշումը պատճառաբանված չէր: Վերջապես, դիմողները բողոքել են Կոնվենցիայի 14-րդ հոդվածի ներքո՝ 3, 5, 6 և 13-րդ հոդվածների հետ մեկտեղ, առ այն, որ իրենց նկատմամբ ցուցաբերվել էր

խտրականություն իրենց քաղաքական հայացքների առումով: Այս կապակցությամբ նրանք մատնանշել են տարբեր ընթացակարգային կանոններ, որոնք կիրառվել էին պետական անվտանգության դատարանների կողմից, և որոնք չէին կիրառվել շարքային հանցագործների նկատմամբ:

78. Այնուամենայնիվ, իր տրամադրման տակ եղած բոլոր նյութերի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ դիմողների վերոնշյալ պնդումներում չի պարունակվում Կոնվենցիայում կամ դրա Արձանագրություններում ամրագրված իրավունքների ու ազատությունների խախտում: Դրանից հետևում է, որ դիմումի այս մասը պետք է հայտարարվի անընդունելի որպես ակնհայտորեն անհիմն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄ

79. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, և իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքը ընձեռում է միայն մասնակի փոխհատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Նյութական վնաս, ծախսեր և ծախքեր

80. Դիմողները պահանջել են նյութական վնասների, ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որի չափը որոշելը թողել են դատարանի հայեցողությանը: Այս կապակցությամբ նրանք խիստ քննադատել են Դատարանին՝ մուտքերի և փաստաթղթերի, ծախսերի և ծախքերի, ինչպես նաև թուրք իրավաբաններին վճարած գումարների վերաբերյալ փաստաթղթեր պահանջելու համար:

81. Ի լրումն, տկն Բարանը պահանջել էր 60,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Պրն Հանը պահանջել էր 35,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

82. Կառավարությունը վիճարկել է այդ գումարների չափը:

83. Դատարանը նշում է, որ դիմողները չեն նշել որևէ կոնկրետ գումար կամ ներկայացրել որևէ փաստարկ կամ փաստաթուղթ ի պաշտպանություն նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ իրենց պահանջի: Նրանք նաև չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթեր իրենց կատարած ծախսերի և ծախքերի վերաբերյալ, ինչպես պահանջվում է Դատարանի Կանոնակարգի 60-րդ կանոնի համաձայն: Դատարանը համապատասխանաբար չի նշանակում որևէ փոխհատուցում սույն կետերով:

84. Հաշվի առնելով սույն գործում հայտնաբերված խախտումների բնույթը և ղեկավարվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը տրամադրում է տկն Բարանին պահանջված գումարն ամբողջությամբ և պրն Հանին 4,800 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

85. Այն նաև գտնում է, որ փոխհատուցման առավել նպատակահարմար եղանակը կլինի դիմողների դատական գործի վերանայումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան (տես վերը՝ Սալդուզի գործը, կետ 72):

B. Տուգանային տոկոսներ

86. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքի հիման վրա՝ հավելված երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴՍՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. Վճռում է, որ առաջին դիմողի դիմումը՝ վատ վերաբերմունքի, իրավական պաշտպանության պակասի, փաստաբանի բացակայության դեպքում Ստամբուլի պետական անվտանգության դատարանի կողմից խոշտանգումների արդյունքում ստացված հայտարարությունների օգտագործման, պետական անվտանգության դատարանի ոչ լիարժեք անկողմնակալության և անաչառության պարագայում, ինչպես նաև ռազմական դատավորի ներկայության և դատախազի կողմից գրավոր հայտարարությունները Վճռաբեկ դատարան չներկայացնելու վերաբերյալ, ընդունելի է:

2. Վճռում է, որ դիմումի մնացած մասն անընդունելի է:

3. Վճռում է, որ առաջին դիմողի նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիմնական և դատավարական առումով խախտում:
4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3(c)-րդ կետերի խախտում:
5. Վճռում է, որ անհրաժեշտություն չկա քննելու դիմողների մյուս գանգատները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո:
6. Վճռում է,
 - (a) որ Պատասխանող պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ վճիռն ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում դիմողներին վճարի ներքոնշյալ գումարները, որոնք պետք է հաշվարկվեն վճարման օրվա դրությամբ թուրքական լիրայի սահմանված փոխարժեքով՝
 - (i) տկն Գյուլդերեն Բարանին՝ 60,000 (վաթսուն հազար) եվրո, գումարած ցանկացած հարկ, որը կարող է հարկվել որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,
 - (ii) պրն Հաչի Ազիզ Հանին՝ 4,800 (չորս հազար ութ հարյուր) եվրո, գումարած ցանկացած հարկ, որը կարող է հարկվել որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում,
 - (b) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում չվճարված գումարի մասով պետք է հաշվարկվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքին՝ հավելված երեք տոկոս:
7. Մերժում է դիմողների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր հրապարակվել է 2012թ. հունվարի 10-ին՝ Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Սալլի Դոլ
Քարտուղար

Ֆրանսուա Թալկինս
Նախագահող